ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, 060900303 info.metsamor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 հունիսի 2026 թվականի N 110-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի N 215-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով , «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և հիմք ընդունելով Մեծամոր համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 19-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի 2026 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 215-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1) Եկամտային մասով.

ա) Կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներին /սուբվենցիաներ/ ավելացնել 8861.6հազար ՀՀ դրամ,

բ) Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից 310820.0 հազար ՀՀ դրամ հատկացնել ֆոնդային բյուջե:

2) Ծախսային մասով.

01-1-1 (Օրենսդիր և գործադիր մարմիններ) նախահաշվի

4241 (Մասնագիտական ծառայություններ) հոդվածին ավելացնել 10000.0 հազար ՀՀ դրամ:

04-2-4 (Ոռոգում) նախահաշվի

4252 (Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում) հոդվածին ավելացնել 15000.0 հազար ՀՀ դրամ,

4269 (Հատուկ նպատակային այլ նյութեր) հոդվածին ավելացնել 2300.0 հազար ՀՀ դրամ,

5129 (Այլ մեքենաներ և սարքավորումներ) հոդվածին ավելացնել 1300.0 հազար ՀՀ դրամ:

04-3-2 (Նավթամթերք և բնական գազ) նախահաշվի

5112 (Շենքերի և շինությունների կառուցում) հոդվածին ավելացնել 8861.6 հազար ՀՀ դրամ:

04-5-1 (Ճանապարհային տրանսպորտ) նախահաշվի

5112 (Շենքերի և շինությունների կառուցում) հոդվածին ավելացնել 20200.0 հազար ՀՀ դրամ,

5113 (Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում) հոդվածին ավելացնել 142900.0 հազար ՀՀ դրամ:

05-1-1 (Աղբահանում) նախահաշվի

4511 (Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական /համայնքային/ կազմակերպություններին) հոդվածից պակասեցնել 47000.0 հազար ՀՀ դրամ:

06-1-1 (Բնակարանային շինարարություն) նախահաշվի

4269 (Հատուկ նպատակային այլ նյութեր) հոդվածին ավելացնել 20600.0 հազար ՀՀ դրամ:

06-3-1 (Ջրամատակարարում) նախահաշվի

4269 (Հատուկ նպատակային այլ նյութեր) հոդվածին ավելացնել 20000.0 հազար ՀՀ դրամ,

4511 (Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական /համայնքային/ կազմակերպություններին) հոդվածից պակասեցնել 20900.0 հազար ՀՀ դրամ:

09-1-1 (նախադպրոցական կրթություն) նախահաշվի

5112 (Շենքերի և շինությունների կառուցում) հոդվածին ավելացնել 129100.0 հազար ՀՀ դրամ,

5113 (Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում) հոդվածին ավելացնել 17320.0 հազար ՀՀ դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Կողմ -14 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԷԴԳԱՐ

ԱՀԱՐՈՆՅԱՆ ՍԵՐԳԵՅ

ԲԱՐԵՂԱՄՅԱՆ ԱՇՈՏ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՀԱՊԵՏ

ՍՆՋՈՅԱՆ ԱՐՏՅՈՄ

ԴՈԲՈՅԱՆ ՏԱՏՅԱՆԱ

ՂԱԶԱՐՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՍԱՖԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄԱԿՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏԱ

ԾԱՏՈՒՐՅԱՆ ՅՈՒՐԻԿ

ՋԱՔԱՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՄԱՑԱԿՅԱՆ ՏՈՆԻԿ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՍԱՐԳՍՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2026 թվականի հունիսի 12
ք.Մեծամոր